"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«ԱՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 1521-Լ

«13» նոյեմբերի 2023 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՎԱԳԱԽՄԲԻ ԱԼՏԱՀԱՐՆԵՐԻ ԽՄԲՈՒՄ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 25-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. 2023 թվականի դեկտեմբերի 13-ին՝ Թատրոնի նվագախմբի ալտահարների խմբում փոխկոնցերտմայստերի թափուր հաստիքը համալրելու նպատակով անցկացնել մրցույթ:

2. Թատրոնի առցանց տոմսերի վաճառքի օպերատոր Ա. Խաչատրյանին՝ ապահովել մրցույթի անցկացման վայրի, ծրագրի և պայմանների վերաբերյալ հայտարարության իրազեկումը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Թատրոնի նվագախմբի վարիչ Գ. Սիմոնյանի վրա:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող օրը:

Թատրոնի տնօրեն՝ **Կ. Դուրգարյան**

ք. Երևան
«13» նոյեմբերի 2023 թ.

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

Հավելված

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի

ազգային ակադեմիական թատրոն» պետական

ոչ առևտրային կազմակերպության տնօրենի

2023 թվականի նոյեմբերի 13-ի N 1521-Լ հրամանի

_____ Կ. Դուրգարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 13-ին, ժամը՝ 14:00-ին, ՀՀ, ք. Երևան, Թումանյան 54 հասցեում գտնվող «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կանցկացվի նվագախմբի ալտահարների խմբում առկա փոխկոնցերտմայստերի թափուր հաստիքը համալրելու մրցույթ՝ հետևյալ ծրագրով.

- Յ.Ս. Բախի Սոնատներից կամ Պարտիտներից, 2 մաս
- Կոնցերտ - /I կամ II, III մասեր/, կամ այլ մեծ կտավի ստեղծագործություն
- Նվագաբաժինների թերթից ընթերցում
- Պարտադիր ծրագիր՝ Ա. Ադանի «Ժիզել» բալետի մենանվագ և Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի մենանվագ:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

Ցանկացողները կարող են դիմումները ներկայացնել Թատրոնի անձնակազմի կառավարման բաժին մինչև 2023 թվականի դեկտեմբերի 11-ը ներառյալ: Դիմումի հետ անհրաժեշտ է ներկայացնել նաև անձնագիր, սոցիալական քարտ կամ նույնականացման քարտ:

Հեռ.՝ +374 (10) 52 33 82, +374 (10) 52 02 41